Երկնային Հոր ծրագրում բոլոր կանայք և տղամարդիկ կարևոր են

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Ընտրեք հետևյալ սցենարներից մեկը և մտածեք, թե հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքներն ինչպես կարող են օգնել որևէ մեկին հասկանալ Ա Կորնթացիս 11.11 հատվածում ներկայացված ճշմարտությունը Երկնային Հոր ծրագրում տղամարդկանց և կանանց դերերի մասին:

1. Կալիի կրտսեր քույրը՝ Էլլեն, լսել է, որ որոշ տղաներ դպրոցում ասել են, թե տղամարդիկ ավելի կարևոր են քան կանայք: Էլլեն հարցնում է Կալիին. «Մի՞թե ես նույնքան արժանավոր չեմ, որքան տղաները»:
2. Ռեյդը մտահոգված է, քանի որ լսել էր, թե քվորումի որոշ անդամներ ինչպես են անհարգալից արտահայտվում կանանց մասին:
3. Հայտնի ֆիլմը նայելուց հետո ընկերների խումբը ծաղրում է հոր կերպարի ծիծաղելի արարքները: Մի քանիսը ասում են, որ հայրը ավելորդ էր, ինչից հետո ընկերներից մեկը հայտարարում է. «Ահա թե ինչու դուք տղամարդու կարիք չունեք՝ երջանիկ ընտանիք ստեղծելու համար»:
4. Էստեբանը և Կլարան պատրաստվում են ամուսնանալ տաճարում: Նրանց ծնողները առաջարկում են, որ նրանք խոսեն, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես է կատարելու իր տարբեր դերերն ու պարտականությունները իրենց ապագա ընտանիքում:

Գործեք հավատքով

- Դուք կամ սցենարում ներկայացված անձինք ինչպե՞ս կարող են հավատքով պատասխանել այս հարցին:
- Գնահատելով կանանց և տղամարդկանց եզակի և կարևոր դերերը, ինչպե՞ս եք օգնում օգնում ձեզ հետևել Հիսուս Քրիստոսին:

Քննեք հասկացություններն ու հարցերը հավերժության հեռանկարով

- Ի՞նչ գիտեք Երկնային Հոր և Նրա ծրագրի մասին, որը կարող է օգտակար լինել նմանատիպ իրավիճակում:
- Որո՞նք են տղամարդկանց և կանանց դերերը Երկնային Հոր ծրագրում:

Ձգտեք մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով

- Ինչպե՞ս կարող են Ա Կորնթացիս 1.11 հատվածում ուսուցանված ճշմարտությունների ձեր իմացությունը և դրանց մասին ձեր վկայությունը օգնել ձեզ արձագանքել այս իրավիճակին:
- Սուրբ գրություններից կամ Եկեղեցու ղեկավարներից ստացված ի՞նչ այլ ոգեշնչված ուսմունքներ կարող են ձեզ օգնել արձագանքել հավատքով

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *In Heavenly Father's Plan, Both Women and Men Are Essential*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.